

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ



ՀՀ ՍՓՅՈՒՌԷԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Տնտեսություն

Լիբանանի նախագահը Ռաֆի Յիրիսեանին ջնարկել է «լիբանանի Հանրապետության Լախազանական գրասենյակում ջրանջամտ

Քաղաքականություն

ԱՆԻ-ն ստանալու է Ֆրենկ Փառոնի Լեւոնտին Դարբաշյան **10** մին որպես լատիստներու վերաբերյալ արտասահմանին

Մասնաճյուղի Պալատի կանոնակարգի 3-ի կարևոր բաղադրատարրը, որպեսզի արժանապատիվ մտածող Հայոց գեղաստացանության մասին

Բարբառա Բարսեղ Բարսեղ Օրսանյան կոչ է արել ջանիլ իր սխալները և ճանաչել Հայոց գեղաստացանությունը

Արսև Շիկր մասնակցելով ԱՄՆ Գործընկերության Հայոց գեղաստացանության գոնեյի յիշատակները

ԱՀՀ-ն կոչ է անում ԱՄՆ բոլոր կոնգրեսականներին աջակցել Հայոց գեղաստացանության ճանաչմանը

ՀՀ սփյուռքի նախարարություն

«Առավոտ»։ Սփյուռքի նախարարը հարցնում էր գործ կ'անի, եթե «մեկ սպր, մեկ մշակողով նախապես զբաղվի

Փոխադրյալ ջնարկատարները և փոխադրանքային համագործակցություն

Ազգային և համամարդկային ներդրման գաղափար

ՀՀ սփյուռքի նախարարությունում կազմակերպող էջ տեսանկյունից «Մոսկովայի հայ երիտասարդների ասոցիացիայի» անդամների մասնակցությունը

ՀՀ սփյուռքի նախարար Հրանտը Ցակոբյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի արտակարգ և ընտանիք դեսպան Թինգիզ Շարմանաշուկինին

Հրանտը Ցակոբյանն էթե լատուսամիտցոները **4**-րդ իջնանայինն են, ապա բազմերևոր **5**-րդ իջնանայինն են

«Գտոր մը Հայրենիքէ միջոցը մեկնարկել է

Քննարկուցին Ռուսաստանի հայ կամերերի կրթական կենտրոններին անհատը կարգը

Սփյուռք

ԱՐԲԵՐԱՅԻՆ ԶՈՅ ՀԱՄԱՅԻՆ ԱՅԵՍՏԻՄԷ ԲԱՐՅԱՅԵԼ ԱՅԵՏԷՂ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԳԱԿԱՆ ԴՈՐՈՇՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԱԿԷ

ԵՎԴԱՀԱՅԳԱԿԱՆ Խառնու-2011

Կառնիստիկայի կարևոր գործ են տեսնողներու նախագահ Օրսանյան ընդ

Ապրիլի **18-24**-ը Կառնիստիկայում կը նշուի որպես Հայոց գեղաստացանության գոնեյի ջանք

Վրաստանի Ռուսոստի բաղադրում գործող «այդ Պարթև Երևանցի» դպրոցում կրթությունը դառնել է երկամսյա

Կոնսերտի Մեք Լոուրա «Սիլ» Օրսանյանի **80** ամակը

ANCA-ն միանում է ապրիլի **24**-ե Արցախի օր լատուսամիտցոն՝ հայ կրթական արտաստանի կոչին

Ուկրաինայի հայ երիտասարդները կոչ են անում Վիկտոր Կառնիկովին ճանաչել Հայոց գեղաստացանությունը

Բարսեղյանը կը գործի հայկական կերակրման դպրոց

ANCA-ն Դասանների պաշտպանության համաժողովի ուսուցողություն է կրտիրել Թուրքիայում բրիտանիաների վիճակի մասը

ԱՄՆ հայ կամերերը արևել Տի իսպանի նախագահի թևանամի կեռ իստատմանին

Ալեքի Լավորոյի հայ կամերերի ջանքերով բաղադրում հայկական եկեղեցի է կառուցում

Բարսեղյանի Հայ Դասի լատուսամիտցոն որդուում է Առեկանիայի դաստանի որդուում Հայոց գեղաստացանության մասին

Հայ կամերերի ճանը **70**-միլիանանոց Թուրքիայում կազմի թե կարողանալ ազդել լատուսամիտցոնի արդիներեյի վրա

Ապրիլի **19**-ին Հաստատում տեղի կ'ունենալ ուկրաինայի համերգ՝ նուրում Հայոց գեղաստացանության գոնեյի յիշատակին

Ամե-ում կը կարանալ պրոֆեսոր Շեմսեանի «հայ փոխադրանքները Ռուս Արևիկում, Երևան **1915**»-ը դասախոսությունը

Երաստիկում տեղի կ'ունենալ սիմպոզիում Հայոց գեղաստացանության թեմայով

Հասարակություն

Մասնաճյուղի նախագահը Դևա Դարբեղը ստանալու է **2011** թ. «հայրի բանկում»

Մշակույթ

2011-ի ընթացքում Ցանաստանում տեղի կ'ունենան միջոցառումներ՝ նուրում Վիկտոր Արարյանին

Ապրիլի **13**-ին Հանում տեղի կ'ունենալ Ծաղ Արտատորի համերգը

Կառնիստիկայի հայ գրողները կը բազմեն Հայոց գեղաստացանության գոնեյի յիշատակը

Ապրիլի **16**-ին Կոնսերտ կ'անան **Armenia Music Awards 2011** մրցանակաբաշխությունը

Սպորտ

Ապրիլի **24**-ին Մասնաճյուղում հայ ձիարիսանները կը պաշտպանեն իրենց երկրի պատիքը

Վիկի Ղարսիեան, Մարտի 24-ին ոտք իմ քիմը բարգելու և Հայոց ցեղասպանութեան գոհերի յիշատակը

ATP ստորիեան մարկանիքում Ղարսի Լադրանդեանը ջարտուեալում է 1585 միտարով գրատեղնել 19-ող տեղը

Յայտարարութիւններ

«Հայաստանի պատմութեան գործում ունեցած նշանակալի արանդի եամարի եամանակակրան ամենամեայ մեղանակարարութիւնը

ՄՓՅՈՒՆՔՍԶՅՅ ԵՐԵՍԱՍԻՐԻ ԱՌԱՋԼՈՐԴՆԵՐԻ ՄՍՏՈՒՑՅԵՆ ԳՂՐՈՑ

Տնտեսութիւն



Լիբանանի նախագահը Ռալֆ Յիրիկեանին շնորհել է «Լիբանանի Հանրապետութեան Նախագահական գրահէ շքանշանը

2011-04-11

Այս շքանշանը Ռալֆ Յիրիկեանին շնորհուել է Հայաստանում լիբանանեան համայնքին մատուցած ծառայութիւնների, գործարարութեան ու գործարար կառավարման բնագաւառներում արձանագրած յաջողութիւնների, նոր մշակոյթ ներդնելու եւ զարգացնելու գործում ունեցած նշանակալի արանդի, Լիբանան-հայաստան բարեկամական յարաբերութիւնների ամրապնդման գործին բերած մասնակցութեան համար, յայտնում է ընկերութեան մամլոյ ծառայութիւնը:

Քաղաքականութիւն



Ահի-ն սատարում է Ֆրենկ Փալոունի Լեռնային Ղարաբաղին 10 մլն դոլար յատկացնելու վերաբերեալ առաջարկին

2011-04-16

Ըստ ԱՀՀ Կոնգրէսի ետ կապերի գծով ներկայացուցիչ Բիանկայ Քաղեան-դոդովի, նախօրէին Ահի-ն խորհրդակցութիւններ է անցկացրել յատկացումների կոմիտեում:

Փալոունը նշել է, որ մտադիր է մօտ 60 մլն դոլար խնդրել Հայաստանի եւ 10 մլն դոլար Լեռնային Ղարաբաղի համար, ինչպէս նաեւ 8 մլն դոլար պաշտպանութեան ոլորտի եւ 2 մլն դոլար զինուորականների միջազգային կրթական թրենինգների համար: «ահի-ն ողջունում է Փալոունի յայտարարութիւնը: Մենք յուսով ենք, որ կ'աշխատենք կոմիտէի անդամների համար՝ Հայաստանին ու Արցախին օգնելու համար: Հաշուի առնելով Ադրբեջանի

ռազմատենչ յայտարարութիւնները եւ դիպլոմատիկ քայրոցի բացումը՝ մենք կոչ ենք անում Կոնգրէսին լիարժեք օգտագործել «ազատութեան ակտի» 907-րդ ուղղումը Ադրբեջանին ԱՄՆ կառավարական օգնութիւնից զրկելու մասին, -ասել է Քաղեան-դոդովը:

Նա նաեւ կոմիտէի ուշադրութիւնն է հրաւիրել քրիստոնեայ փոքրամասնութիւնների վիճակին Մերձատր Արեւելքում, որոնք ապրում են «ռազմական պայմաններում ու ճնշման տակ»: Ահի-ն նաեւ կարելոքում է Թուրքիայի կողմից հնչող սպառնալիքները՝ թուրքաբնակ 100 հազար հայերին վտարելու մասին: «մենք կոչ ենք անում Օբամային, որպէսզի նա ապրիլի 24-ի իր ամենամեայ ուղերձում Մեծ եղեոն հայերէն արտայայտութիւնը փոխարինի անգլերէն՝ Հայոց ցեղասպանութիւն եզրոյթով, -ասում է ԱՀՀ յայտարարութեան մէջ:



Մասաչուսէթի Պալատի խօսնակ, Չի կարելի թոյլ տալ, որպէսզի աշխարհը մոռանայ Հայոց ցեղասպանութեան մասին

2011-04-16

«մենք չպէտք է թոյլ տանք, որպէսզի աշխարհը մոռանայ այդ ոճրագործութեան մասին: Դա չափազանց կարեւոր է եւ մենք յարգում ենք Հայոց ցեղասպանութեան գոհերի յիշատակը, -ասել է Պալատի խօսնակ Ռոբերտ Դելէոն, գրում է WWLP.

Իր ուղերձում Բոքսերը մասնատրապէս նշել է ցեղասպանութեան 95-րդ տարին, մի մարդկութեան գիտակցութեան մէջ: Մակայն համար անելի ցատոտ է դարձնում Օսմանեան կոտորածը Ցեղասպանութիւն ճանաչելու՝ ԱՄՆ Բոքսերը դիմել է Օբամային ամերիկեան դեկլարութեան այդ սխալը շտկելու կոչով:



Բարբարայ Բոքսերը Բարաք Օբամային կոչ է արել շտկել իր սխալները եւ ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը

«այս տարի լրանում է Հայոց ողբերգութեան, որը սեւ բիծ է թողել այդ ողբերգութիւնը յատկապէս հայ ժողովրդի կայսրութիւնում նախօրօք ծրագրուած հայերի իշխանութիւնների անընդունակութիւնը:

Ընդ որում, ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամը իշեցրել է, որ 2008 թուականին, դեռեւս լինելով սենատոր, Օբաման ասաց, որ Հայոց ցեղասպանութիւնը ոչ թէ պնդում, անձնական կարծիք կամ տեսակետ է, այլ ապացուցուած եւ անվիճելի փաստ: «չճանաչելով այդ փաստը՝ ԱՄՆ իշխանութիւնները երկարացնում են Ցեղասպանութեան գոհերի ծառանգների, ինչպէս նաեւ ողջ հայ համայնքի ցարէ,- ընդգծել է Բոքսերը՝ անելացնելով, որ չնայած որան, ԱՄՆ իշխանութիւնները շարունակում են Ցեղասպանութիւնը բնութագրելու համար կիրառել «ոչնչացում», «զանգուածային գնդակահարութիւն էւ «սպանութիւն տերմինները: Նրա խօսքով, դա ոչ միայն վիրատրում է Հայոց ցեղասպանութեան գոհերի յիշատակը եւ նրանց ծառանգներին, այլեւ վնասում է Ամերիկային:



Ադամ Շիֆը մասնակցեց ԱՄՆ Կոնգրէսում Հայոց ցեղասպանութեան գոհերի յիշատակմանը

2011-04-14

Հանդիպման ընթացքում քննարկուել է Հայոց ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ աշխատանքի նոր ռազմավարութիւնն ու ԱՄՆ հայ համայնքի միւս կարեւոր հարցերը:

Հանդիպումից յետոյ Ադամ Շիֆն ու Քեն Խաչիկեանը մասնակցեցին ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության գոհերի յիշատակին նուիրուած միջոցառմանը Կապիտոլիական բլուրում, հաղորդել են կոնգրեսականի գրասենեակից:



ԱՀՀ-ն կոչ է անում ԱՄՆ բոլոր կոնգրեսականներին աջակցել Հայոց ցեղասպանության ճանաչմանը

2011-04-14

Չրիւցի ընթացքում քննարկուել են հիմնական քաղաքական հարցերը, կապուած Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի անվտանգութեան հետ՝ Ադրբեջանի ռազմատեւչ յայտարարութիւնների լոյսի ներքոյ, Հայոց ցեղասպանութեան ճանաչումն ու Ցեղասպանութեան 96-ամեակին նուիրուած միջոցառումները Կապիտոլիումի բլրին:

Կոնգրեսական Շերմանը հաստատել է իր աջակցութիւնը Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին եւ Հայոց ցեղասպանութեան ճանաչմանը: Նա նշել է նաեւ, որ ելոյթ է ունեցել Կոնգրեսում Ցեղասպանութեան գոհերի յիշատակին նուիրուած միջոցառմանը: «մենք

ողջունում ենք կոնգրեսական Շերմանի դերը ԱՄՆ-ի ու Հայաստանի, ԱՄՆ-ի ու Լեռնային Ղարաբաղի միջեւ յարաբերութիւնների ամրապնդման գործում: ԱՀՀ-ն կոչ է անում բոլոր կոնգրեսականներին աջակցել Հայոց ցեղասպանութեան ճանաչմանը, -ասել է Արդունին:

Բրեդ Շերմանը Կոնգրես է ընտրուում արդէն 8-րդ անգամ Կալիֆորնիայի նահանգից: Նա ԱՄՆ Կոնգրեսի արտաքին գործերի կոմիտէի անդամ է:

ՀՀ սփիւռքի նախարարութիւն

«Առավօտ». Սփիւռքի նախարարը հայրենանուէր գործ կ'անի, եթէ «մէկ ազգ. մէկ մշակոյթ» նախագիծը փակի

2011-04-15

Կանաչ լոյսի տակ անցնող ադրբեջանցիս ինձ մշակոյթային առումով աւելի մօտ է, քան կարմիրի տակ վազող հայր: Մակայն մենք ադրբեջանցու հետ տարբեր ազգեր ենք ներկայացնում՝ այնքան տարբեր, որ եթէ, Աստուած մի արասցէ, հակադիր յարամատներում յայտնուենք, կարող ենք իրար վրայ կրակել: Գլենդելից այստեղ եկող ռաբիսը եւ նրա երգերը լսող երեսանցի ռաբիսը, անշուշտ, նոյն մշակոյթի կրողներն են: Բայց այդ մշակոյթը վերագրել ամբողջ ազգին՝ չի կարելի:



Մի խօսքով, «մէկ ազգ, մէկ մշակոյթ» կարգախօսը կեղծ է, շինծու: Հայերի, ինչպէս նաեւ բոլոր այլ ազգերի մէջ կան հսկայական մշակութային տարբերութիւններ: Մշակոյթը մեզ չի կարող միատրել, այն մեզ բաժանում է: Կրօնը, հաւատքը՝ մոյնպէս, ցաւօք, չեն կարող դառնալ միատրող գործօն, ինչպէս որ դա հրեաների մօտ է: Ոչ բոլոր հայերը, եթէ նոյնիսկ մկրտուած են եւ որոշակի ծեսեր են պաշտպանում, քրիստոնէական արժէքների կրողներ են: Մայրենի լեզուն, թերես,

այդպիսի միատրող դեր կարող է խաղալ: Այստեղ շատ բան կախուած է մեզից, նկատի ունենա՛լ: Հայաստանի Հանրապետութիւնից:

Մենք պետք է փայփայենք մեր պետական լեզուն, ոչ թէ էլիտար օտարալեզու դպրոցներ ստեղծենք: Խմբագրականի յետագայ տողերում կարողւմ ենք. «ես չգիտեմ, թէ ինչու է ւարտուելու Քամար Պողոսեան-հրանուշ Յակոբեան «փոխհրաձգութիւնը»: Յուսով եմ, դատարանը կը պարզի եւ ճիշտ որոշում կ'ընդունի: Բայց տիկին Յակոբեանը շատ մեծ հայրենանուէր գործ կ'անի, եթէ «մէկ ազգ, մէկ մշակոյթ» նախագիծը ընդհանրապէս փակի: «տաշի-տըմրլէ խմբերը Հայաստանում առանց Սփիւռքի էլ են լիքրէ:

Փոխադարձ շնորհատրանքներ եւ փոխշահաւէտ համագործակցութիւն

2011-04-14

Ընդունելութիւնը տարբերում էր իր բնոյթով, քանի որ այս անգամ առաւելապէս գերիշխում էր փոխադարձ շնորհատրանքների մթնոլորտը՝ օրերիս նշուել էր ՀՀ սփիւռքի նախարարի, իսկ ապրիլի 15-ին տօնուելու է Արա Աբրահամեանի ծննդեան օրը: Տօնական տրամադրութիւնը սակայն, ամենեւին չիանգարեց գործնական գրոյցին:



Հանդիպման ընթացքում արդինաւէտ համագործակցութեան աւանդոյթ ունեցող գործընկերները քննարկեցին 2011 թ. ՀՀ սփիւռքի նախարարութեան կողմից իրականացուելիք մի շարք ծրագրերի եւ միջոցառումների իրականացման հնարաւորութիւնները, ծրագրեցին նոր ձեռնարկումներ:

ներդաշնակ զարգացում

2011-04-14

Լ. Մանուչարեանին ընդունեց դպրոցի տնօրէն Վազգէնովնան, այնուհետեւ միասին միջոցառմանը: Տնօրէնի խօսքին յաջորդեց Լ. հերթին շնորհակալութիւն յայտնեց Օֆելեայ համար: Նա նաեւ նշեց, որ 1650 դպրոցը աչքի է բազմազգ կրթական համալիրներից է: Հնչեցին

փաստը, որ մի բեմի վրայ միասնական հանդէս եւ մէկը միասին ծանօթացնում է իր երկրի աւանդոյթներին, երգին, պարին: Պարզապէս հիանալի է, երբ ազգութեամբ ոռու երէխան նուագում է Արամ Խաչատրեան եւ ներկայացնում հայ մշակոյթը:

միջոցառումից յետոյ Օ. Առաքէլեանը Լ. Մանուչարեանին ուղեկցեց դպրոցի թանգարան, որտեղ տնօրէնի ձեռքի աշխատանքից գատ տեղ էին գտել տարբեր ազգերի պատկանող մշակութային նմուշներ: Ցատկանշական է նշել նաեւ հայկական թոնրի մասին, որն իր ուրոյն տեղն էր գտել թանգարանում՝ ստեղծելով լիարժէք հայկական կոլորիտ:

համաշխարհային մշակոյթը ձեւաւորում է ազգային մշակոյթներից: Միայն սեփական մշակոյթը սերտելով մարդ կարող է դառնալ բարեկիրթ



Ազգային եւ համամարդկայինի

Առաքէլեան Օֆելեայ

ուղեւորուեցին դէպի դահլիճ՝ մասնակցելու Մանուչարեանի ողջոյնի խօսքը: Նա առաջին Վազգէնովնայից ազգանուէր գործունէութեան ընկնում իր իրապատկութեամբ. այն եզակի շնորհատրանքներ եւ բարեմադրանքներ: ակնածանքի եւ մեծարանքի է արժանի այն են գալիս տարբեր ազգերի ներկայացուցիչներ մշակոյթին, ազգային

և հետևաբար միայն այդ դեպքում կարող է հասկանալ ել յարգել մէկ այլ ազգի մշակոյթ, որտեղից էլ զարգանում են մարդկային փոխարարբերութիւնները, իսկ երեխաները կրթում և դաստիարակում են այն ջերմ և հիւրընկալ մթնոլորտում, որը տիրում է դպրոցում:



ՀՀ սփիւռքի նախարարութիւնում կազմակերպուեց տեսակոնֆերանս «Մոսկուայի հայ երիտասարդների ասոցիացիայի» անդամների մասնակցութեամբ

2011-04-13
Մոսկուայի տասնչորս բուհերի հայազգի ուսանողների և շրջանաւարտների մասնակցութեամբ ստեղծուած ասոցիացիան՝ Մոսկուայի միջազգային յարաբերութիւնների պետական համալսարանի ասպիբանտ Հենրի Սարգսեանի գլխաւորութեամբ, ակտիւ գործունէութիւն է ծաւալում Մոսկուայի հայ երիտասարդութեան շրջանում:

Հայաստանից տեսակոնֆերանսին մասնակցում էին ՀՀ սփիւռքի նախարարի տեղակալ Վարդան Մարաշեանը, նախարարութեան աշխատակազմի վարչութիւնների և բաժինների պետեր:

Ողջունելով տեսակոնֆերանսի մասնակիցներին՝ Վ.Մարաշեանը ներկայացրեց ՀՀ սփիւռքի նախարարութեան գործունէութիւնն ու առաջիկայ ծրագրերը՝ կարեւորելով նախարարութեան յատկապէս երիտասարդական ծրագրերին մոտկոնքնակ հայ երիտասարդութեան ակտիւ մասնակցութիւնը:

Մասնաւորապէս քննարկուեց ՀՀ սփիւռքի նախարարութեան երիտասարդական «Արի տուն», «Երիտասարդ առաջնորդների դպրոց», «Երիտասարդ լրագրողների դպրոց» և այլ ծրագրերին Մոսկուայի հայ երիտասարդութեան մասնակցութեան հնարաւորութիւնները: Նախարարութեան աշխատակիցները ներկայացրեցին ՀՀ սփիւռքի նախարարութեան էլեկտրոնային գրադարանը և «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականը, անդրադարձ կատարուեց նաեւ ՀԲԸՄ Հայկական վիրտուալ համալսարանին և «Դէպի Հայք» հիմնադրամի ծրագրերին:

Կարեւորելով ՀՀ սփիւռքի նախարարութեան կողմից իրականացուող ծրագրերը հայապահպանութեան, Հայրենիք-Սփիւռք գործակցութեան ամրապնդման և զարգացման գործում՝ ասոցիացիայի անդամները պատրաստակամութիւն յայտնեցին ակտիւօրէն ներգրաւուել և աջակցել դրանց իրականացմանը, մասնաւորապէս՝ Մոսկուայի տասնչորս բուհերի հայ ուսանողութեանը նախարարութեան ծրագրերը ներկայացնելու առումով: Մոսկուայի հայ երիտասարդները ընդձեցին նաեւ հայազգի երիտասարդ մասնագէտների պրակտիկան Հայաստանում անցկացնելու անհրաժեշտութիւնը, ինչը հնարաւորութիւն կը ստեղծի Սփիւռքի մասնագիտական ներուժն ի նպաստ Հայրենիքի զարգացման և հզօրացման օգտագործելու:



ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանն ընդունեց Հայաստանի Հանրապետութիւնում Վրաստանի արտակարգ և լիազօր դեսպան Թենգիզ Շարմանաշուիլիին

2011-04-12
Ողջունելով հիւրին՝ նախարար Հ.Յակոբեանը ծանօթացրեց ՀՀ սփիւռքի նախարարութեան գործունէութեանն ու իրականացուող ծրագրերին:

Հ.Յակոբեանը ներկայացրեց նաեւ վիրահայութեանը յուզող հարցերը, որոնցով Վրաստանի հայերը յաճախ դիմում են ՀՀ սփիւռքի նախարարութեանը:

Դեսպան Թ.Շարմանաշուիլիին խնդրեց աջակցել Թբիլիսիում կայանալիք գործարարների հաւաքին, որի ժամանակ քննարկուելու են Սամցխե-Ջավախքի նահանգում իրականացուելիք

ներդրումային ծրագրերը:

Կողմերը կարծիքներ փոխանակեցին նաեւ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող հարցերի շուրջ:



Հրանոյշ Յակոբեան. Եթէ լրատուամիջոցները 4-րդ իշխանութիւնն են, ապա բլոգերները 5-րդ իշխանութիւնն են

2011-04-12
«Եթէ լրատուամիջոցները 4-րդ իշխանութիւնն են, ապա եւ Ձեզ անուանում եմ 5-րդ իշխանութիւնը,- ասաց Հրանոյշ Յակոբեանը բլոգերներին:

Հրանոյշ Յակոբեանն ասաց, որ անձնական բլոգ բացելու մտադրութիւն դեռեւս չունի:

«Նման փորձ ունեցել եմ, անձնական էջ էի բացել համադասարանցիներ օնցիալական ցանցում և դա բուն աղմուկ բարձրացրեց տարբեր մարդկանց և բարեկամների շրջանում,- ասաց նախարարը և աւելացրեց. «մենք Facebook սոց. ցանցում բացել ենք «համահայկական երիտասարդական խորհրդարան (Pan-Armenian Youth Parliament) խումբ, որը բացելու առաջին

իսկ օրը ստացանք 200-ից աւելի արձագանք: Մա շատ յարմար տարբերակ է օնլայն շփուելու, հարցեր ստանալու և դրանց պատասխանելու համար:



«Կտոր մը Հայրենիքէ. մրցոյթը մեկնարկել է

2011-04-12
«Կտոր մը Հայրենիքէ հայագիտական երիտասարդական գիտական հետազօտութիւնների մրցանակաբաշխութիւնը նուիրուած է Հայաստանի անկախութեան քսանամեակին:

Բոլոր ժամանակներում հայ ստեղծագործ ու ճկուն մտքի շնորհիւ է հնարաւոր եղել հայ ժողովրդի դիմակայումը ճակատագրի փորձութիւններին: Բարաբանչիւրն ունի Հայրենիքի իր ընկալումը, և այս գիտական հետազօտութիւնները հրաշալի հնարաւորութիւն են ընձեռում ճանաչելու այն երիտասարդութեան աչքերով:

Մրցանակաբաշխության նպատակն է վերհանել հայ երիտասարդի մտահոգությունները, Հայրենիքի ամրապնդմանն ու հզորացմանն ուղղված քայլերի կանխատեսումը, եւս մէկ անգամ հաստատել նրանց կարեւորագոյն դերակատարութիւնը հայոց պետականութեան զարգացման գործում:

«Կտոր մը Հայրենիքէ երիտասարդական հայագիտական հետազոտութիւնների մրցոյթին կարող են մասնակցել ուսանողներ, ասպիրանտներ եւ մինչեւ երեսունհինգ տարեկան երիտասարդ գիտնականներ Հայաստանից եւ Սփիւռքից:

Յայտադիմումների եւ գիտական հետազոտութիւնների ներկայացման վերջնաժամկէտն է ս.թ. սեպտեմբերի 5-ը:



Քննարկուեցին Ռուսաստանի հայ համայնքի կրթական հիմնախնդիրներին առնչուող հարցեր

2011-04-11

Նախարար Հ.Յակոբեանը ներկայացրեց ՀՀ սփիւռքի նախարարութեան գործունեութիւնը եւ 2011 թ. իրականացուելիք ծրագրերը: Քննարկուեցին Ռուսաստանի հայ համայնքի կրթական հիմնախնդիրներին առնչուող հարցեր, մասնաւորապէս անդրադարձ կատարուեց հայկական դպրոցներին աջակցելու, շուսակցու հայերի համար հայերէնի ուսուցման ժամանակակից դասագրքեր ստեղծելու հարցերին՝ նպատակ ունենալով հայերէնը ուսուցանելը եւ առաւել հասանելի դարձնել մեծ թուով ռուսաստանաբնակ հայերի համար:

Է.Զօրեանը եւ Ս.Կարակեանը մանրամասներ ներկայացրեցին համապատասխանաբար ՀՀԲՍ Հայկական վիրտուալ համալսարանի եւ «Դէպի Հայք» հիմնադրամի գործունեութեան

վերաբերեալ:

Քննարկուեցին նաեւ ՀՀ սփիւռքի նախարարութեան կողմից իրականացուող երիտասարդական ծրագրերին Ռուսաստանի հայ համայնքի առաւել ակտիւ մասնակցութեան հնարաւորութիւնները: Հանդիպման մասնակիցները պատրաստակամութիւն յայտնեցին աջակցել Սփիւռքի ներուժի համախմբմանն ուղղուած ՀՀ սփիւռքի նախարարութեան ծրագրերին:

Սփիւռք

ԱՐԽԱԳԻՅԱԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԱՇԽԱՏՈՒՄ Է ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԱՅՏԵՂ ԳՈՐԾՈՂ ՀԱՅՎԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՍԱԿԱՐԴԱԿ

2011-04-16



Սեմինարի աշխատանքները ղեկավարեց Արխագիայի հայ համայնքի կրթութեան յանձնաժողովի նախագահ Խաչիկ Մինասեանը: Սեմինարի աշխատանքներին մասնակցում էին Արխագիայի համայնքի ղեկավար՝ Սուրեն Կերսելեանը, արտաքին կապերի բաժնի վարիչ՝ Գալուստ Տրապիգոնեանը եւ այլք:

Ուսմասվարի աշխատանքի մասին խօսեց Գագրայի Խ. Աբովեանի անուն համար 3 միջնակարգ դպրոցի ուսմասվար Ա. Կապիկեանը, իսկ տնօրէնի աշխատանքի մասին՝ Գուդաութայի շրջանի Ագարակ գիւղի միջնակարգ դպրոցի տնօրէն Շ. Քեւեանը:

Ելոյթներ ունեցան Գուլիրիպշի շրջանի կրթութեան բաժնի վարիչ Ազնիւ Մրտանեանը, Գագրայի շրջանի տեսուչ Գոհար Աւետիսեանը, <Համշէն> թերթի խմբագիր՝ Արտաւազ Մարեցեանը, Ս. Կերսելեանը, Գ. Տրապիգոնեանը եւ ուրիշներ:

Սեմինարի հիմնական նպատակն էր բարձրացնել Արխագիայում գործող հայկական դպրոցների ընդհանուր կրթական մակարդակը, կարեւորուեց նաեւ դպրոցների վերանորոգման եւ հայկական դպրոցները մանկավարժական կադրերով ապահովելու խնդիրը:

Այսպիսով, սկիզբ դրուեց պարբերաբար հանդիպումների, որոնց նպատակը կը լինի արծարծել եւ փորձել լուծել հայկական դպրոցների հետ կապուած շատ խնդիրներ ու հարցեր:



ԵՎՐԱՀԱՅՎԱԿԱՆ Խաղեր-2011

2011-04-15

Ամէն տարի Քրիստոսի Սուրբ Յարութեան եւ դրան նախորդող օրերին Եւրոպական որեւէ երկրում համախմբում են տասնեակ հարիւրաւոր հայ երիտասարդներ՝ եւրոպական եւ Մերձատր Արեւելքի երկրներից, հայապահպանութեան գաղափարը մշտաբար ու պահելու մեծագոյն ցանկութեամբ: Համաեւրոպական հայկական խաղերի կազմակերպումը ոչ միայն մարզական միջոցառում է, այլեւ Եւրոպայի տարբեր երկրներում բնակուող հայ երիտասարդների համախմբմանն ու հայապահպանութեանը միտուած բացառիկ դրսեւորում: «Եվրահայկական խաղերին Հայաստանի Հանրապետութիւնից մարզիկների մասնակցութիւնը՝ օրէջօր զարգացող, կայունացող ու ամրապնդուող Հայաստան-սփիւռք կապերի վկայութիւնն է:

Ժնեւի հայ համայնքը ձեւաւորուել է 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին: Այստեղ բնակուում է շուեյցարահայութեան զգալի մասը՝ շուրջ 1000 մարդ: Ժնեւում է կենտրոնացուած համայնքի ազգային կառոյցների հիմնական մասը: Առաջին հայկական կազմակերպութիւններից է ժնեւի Հայկական միութիւնը, որը հիմնադրուել է 1943 թուականին: Ծնունդով լիբանանցի, այժմ շուեյցարաբնակ հայազգի Վահէ Կապրաշը աւելի քան 20 տարի գլխաւորել է Շուեյցարիայի հայկական միութիւնը: Ներկայումս Միութեան նախագահն է Զարէ Կուրիջեանը: Միութիւնը մեծ դերակատարութիւն ունի Սփիւռքում հայապահպանութեան, երիտասարդութեան հայեցի դաստիարակութեան գործում: Բազմաթիւ համայնքային միջոցառումներից բացի, միութիւնը կազմակերպում է նաեւ միջհամայնքային սպորտային տարբեր մրցաշարեր: Մրցումներ են անցկացուում մինի ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, բաղմինտոնի, շախմատի մարզաձեւերից:

ՀՀ սփիւռքի նախարարութեան աշխատակազմի համահայկական, միջազգային եւ եկեղեցական կառոյցների հետ կապերի վարչութիւն

Կալիֆորնիայի հայերը ցոյց են անցկացնելու նախագահ Օբամայի դէմ

2011-04-15



«նախագահ Օրաման նախընտրական քարոզարշաւի շրջանակներում այցելելու է Լոս Անջելես եւ մինչեւ ապրիլի 24-ը գտնուելու է նահանգում: Օրաման պետք է լսի մեր համայնքի ձայնը, որը հիասթափուել է նրանից, երբ նա չի ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը: Ամն-ում սփիւռքի ամենամեծ համայնքն է եւ մենք պետք է մեր կարծիքը հասցնենք ոչ միայն ԱՄՆ նախագահին, այլ նաեւ բոլոր ԶԼԻ-ներին, որոնք լինելու են Օրամայի: Մենք կոչ ենք անում բոլոր հայերին պաշտպանել մեզ, մեր ձայնը պետք է լսուի,- յայտարարել են ակցիայի կազմակերպիչները, գրում է Asbarez.com-y:



Ապրիլի 18-24-ը Գալիֆորնիայում կը նշուի որպէս Հայոց ցեղասպանութեան զոհերի շաբաթ

2011-04-15

Արարողութեանը ներկայ էին կոնգրեսականներ, համայնքի ներկայացուցիչներ եւ ԱՄՆ ՀԱԷ Արեւմտեան թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Յովնան Տերտերեանը: «այսօր մենք աղօթում ենք 20 դարի առաջին ցեղասպանութեան զոհերի հոգիների հանգստութեան համար: Գալիֆորնիայի նահանգի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումը հոգեւոր խթան հանդիսացաւ ԱՄՆ հայ համայնքի համար,-ասել է արքեպիսկոպոսը:

Հստ ԱՆԻ Խորհրդի անդամ Սեւակ Խաչատուրեանի, Գալիֆորնիայի օրենսդիրները կարելու քայլ են կատարել՝ ճանաչելով մարդկութեան դէմ կատարուած այդ ոճրագործութիւնը: «ես յուսով եմ, որ կը գայ ժամանակը, երբ դաշնային կառավարութիւնը, ինչպէս նաեւ Թուրքիայի կառավարութիւնը կը հաշտուեն պատմական իրողութեան հետ եւ վերջապէս կը ճանաչեն Հայոց ցեղասպանութիւնը,-ասել է Խաչատուրեանը:

Վրաստանի Ռուսթաւի քաղաքում գործող «սուրբ Պարթէւէ կիրակնօրեայ դպրոցում կրթութիւնը դարձել է երկամեայ

2011-04-15

Երբ Ազգային Առաջնորդարանում կրթական պատասխանատուի պաշտօնը ստանձնեց երիտասարդ Մարի Առաքելովան, որոշ փոփոխութիւններ կատարուեցին կիրակնօրեայ դպրոցների ծրագրերում՝ ուսումը դարձաւ երկամեայ եւ մշակուեց դպրոցի սաների գիտելիքներին համապատասխան նոր ծրագիր: Դպրոցն ունի 2-րդից մինչեւ 9-րդ դասարաններ՝ համալրուած համապատասխան տարիքի երեխաներով, մէկ միասնական դասարան՝9- 12-րդ դասարանցի երեխաների համար եւ եւս մի դասարան՝ 18-60 տարեկան սաների համար:

Վահրամ Գայֆեճեանի անուն ստեղծագործողների միութեան



Գլենտլի Մէջ Նշուեցաւ «Ալիք» Օրաթերթի 80ամեակը

2011-04-14

Չեռնարկի հանդիսավարն էր ԶՅՐ Արեւմտեան Ամերիկայի կեդրոնական կոմիտէի Հանրային յարաբերութիւններու յանձնախումբի պատասխանատու Մարո Նազարեան, որուն բացման խօսքէն ետք, ողջոյնի եւ շնորհատրական խօսքերով ելոյթ ունեցաւ «Ասպարէզ» օրաթերթի խմբագիր Աթո Պողիկեան, ապա՝ ՀՄԸՄԻ «Արարատ» մասնաճիւղի վարչութեան կողմէ Ռուբին Գուրջեան: Արտայայտողները իրենց խօսքերուն մէջ նշեցին, թէ «Ալիք»ը իրանահայութեան համար լոկ լրատու թերթ մը չէ եղած. անիկա եղած է մտաւորականութեան հաւաքատեղի- ժամադրավայր, սերունդ դաստիարակող օճախ, իրանահայ գաղթօճախի անբաժան մասնիկ, որ իր գոյութեան բոլոր ժամանակահատուածներուն, պատմական բոլոր վերիվայրումներու ընթացքին անձնուրացութեամբ ու յանձնառութեամբ ծառայած է հայութեան:

Օրուն առիթով իր սրտի խօսքը փոխանցեց ազգային-հասարակական գործիչ Սեպուհ Յովհաննիսեան: Ան իւրայատուկ անմիջականութեամբ վկայութիւններ փոխանցեց «Ալիք»ի առաջին տասնամեակներու խմբագիրներուն ու արտօնատերերուն մասին՝ ներկաներուն պատմելով մտաւորական այդ փաղանգի ինքնագոհ նուիրաբերումի առօրեայէն:

Յուցարդուեցաւ «Հորիզոն» հեռուստակայանին կողմէ (Յովնան Թաշճեանի պատրաստութեամբ) «Ալիք»ի մասին նկարահանուած տեսագրութիւնը: Ապա խօսք առաւ «Ալիք»ի արտօնատեր ճարտարապետ Ալպերթ Աճեմեան, որ շրջանիս հայ հասարակութեան հանդիպելու ծրագիրով յատկապէս հրաւիրուած էր Լոս Անջելըս:

Աճեմեան հանգամանօրէն ներկայացուց «Ալիք»ի գլխաւոր իրագործումները՝ շեշտելով թերթի անկողմնակալ լրատուութեան աղբիւր ճանչցուելու, իբրեւ գաղափարական հնոց ծառայած ըլլալու ու շրջանի հայութեան սերն ու յարգանքը շահած ըլլալու փաստերը:

Այդ սիրոյ ու յարգանքի ապացոյցներէն մէկը, ըսաւ Աճեմեան, թերթի հրատարակութեան վայրէն հազարաւոր մղոններ հեռու այս քաղաքին մէջ, այսպիսի խորհրդանշան ներկայութեամբ անոր տարեդարձը նշելու իրողութիւնն է: Աճեմեան գնահատեց «Ալիք»ի տարբեր շրջաններու խմբագրական կազմերուն, թերթի աշխատակիցներուն ու անոր յարկին տակ բոլոր աշխատողներու անսակարկ նուիրումը, որուն շնորհիւ, «Ալիք»ը կրցած էր դիմագրաւել ամէն տեսակի մարտահրաւերներ:

Ա. Աճեմեանի բանախօսութենէն ետք, ելոյթով հանդէս եկաւ ՀՄԸՄԻ «Արարատ» երգչախումբը: Այս նշանակալից առիթով իր օրհնութեան խօսքով բեմ բարձրացաւ Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեան: Չեռնարկի վերջին բաժինով տեղի ունեցաւ ընդունելութիւն, որուն ընթացքին կտրուեցաւ 80ամեակի առիթով պատրաստուած կարկանդակը՝ տասնամեակներ «Ալիք»ի տպարանին մէջ աշխատած գրաշար Յովսէփ Ծախբազեանի եւ արտօնատեր Ալպերթ Աճեմեանի կողմէ:

Չեռնարկին ներկայ էին շուրջ 400 հանդիսատեսներ:

Asbarez



ANCA-ն միանում է ապրիլի 24-ն Աղօթքի օր յայտարարելու՝ հայ կրօնական առաջնորդների կոչին

2011-04-13

Այդ օրը նշուելու է եւ՝ Զատիկը, եւ՝ 1915-1923թթ. Օսմանեան կայսրութիւնում Հայոց ցեղասպանութիւնը:

«մենք ողջունում ենք մեր հոգեւոր հայրերի կոչը՝ Աղօթքի օր յայտարարել ապրիլի 24-ը, որը

նշանադրում է Յիսուս Քրիստոսի Յարութիւնն ու Յեղասպանութիւնը վերապրած հայ եւ այլ քրիստոնէայ ժողովուրդների վերածնունդը,-
ասել է ANCA-ի գործադիր տնօրէն արամ Համբարեանը:

Ուկրաինայի հայ երիտասարդները կոչ են անում Վիկտոր Եանուկովիչին ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը

2011-04-13

Ըստ Ուկրաինայի հայ երիտասարդների ասոցիացիայի նախագահ Դաւիթ Մկրտչեանի, Ռեհե-ն յուսով է, որ իրենց ձայնը լսելի կը լինի Ուկրաինայի նախագահին:

«հայոց ցեղասպանութեան փաստը դատապարտուել ու ճանաչուել է աշխարհի շատ երկրների կողմից, այդ թուում նաեւ Ռուսաստանի, Ամն-ի, Կանադայի, Ֆրանսիայի, Բելգիայի եւ այլ երկրների կողմից: Սակայն, Ուկրաինան մինչ օրս չի որոշել իր վերաբերմունքն այդ յանցագործութեան հանդէպ,-ասել է Մկրտչեանը, հաղորդում է Analitika.at.ua-ն:

2010թ. ապրիլի 23-ին յայտնի ուկրաինացի քաղաքագետներ, գիտնականներ, հասարակական ու քաղաքական գործիչներ, ինչպէս նաեւ Ուկրաինայի մի շարք ազգային համայնքների ներկայացուցիչներ դիմել էին Ուկրաինայի նախագահին Հայոց ցեղասպանութիւնն օրէնսդրոէն ճանաչելու կոչով: Նման կոչերով դիմել են նաեւ Կիեւի Գոլոսեւի շրջանային խորհուրդը, Իգիմսկի քաղխորհուրդը, Չերկասկի քաղխորհուրդն ու Կիեւի քաղխորհուրդը:




Քոբուլեթիում կը գործի հայկական կիրակնօրեայ դպրոց

2011-04-12

Առաջին 17 աշակերտները մեծ եռանդով սկսեցին ծանօթանալ իրենց պապերի արմատներին՝ հայերէն գրել-կարդալ եւ խօսել կը կարողանան Քոբուլեթիի Հայ համայնքի գրասենեակում: Կիրակնօրեայ դպրոցի բացմանը աջակցեցին Աջարիայի հոգեւոր հովիւ Տէր Արարատ քահանայ Գումբալեանը, Հայ համայնքը եւ որոշ չափով Քոբուլեթիի քաղաքապետարանը: Մինչ այդ, ապրիլի 7-ին առաջին անգամ Քոբուլեթիում Հայ համայնքը եւ հայկական եկեղեցին հանդիպեցին տեղի հայ երիտասարդների հետ: Միջոցառման ընթացքում որոշուեց, որ Բաթումիի երիտասարդների հետ միասին Քոբուլեթիի եւ Չաքուիի ակտիւ երիտասարդները կը մասնակցեն Միլիտերի նախարարութեան ծրագրերում:

Արթուր Յովհաննիսեան Աջարիայի Հայ Համայնքի մամլոյ դեկավար



ANCA-ն Դաւանանքի պաշտպանութեան համաժողովի ուշադրութիւնն է հրախրել Թուրքիայում քրիստոնէաների վիճակի վրայ

2011-04-12

Համաժողովի աշխատանքներին մասնակցում է աւելի քան 150 մարդ 30 միջկրօնական խմբերից: Համաժողովի հիմնադիրներն են կոնգրեսականներ Թրենթ Ֆրենքսը եւ Էմմանուիլ Քլիւերը, համանախագահն է Նիգեր Շուլերը, որը փախարհիեց Քլիւերին 112-րդ գումարման Կոնգրեսում:

Խնդիրների շուրջ, այդ թում նաեւ Թուրքիայում քրիստոնէաների շարունակուող հետապնդումների հարցում:

ԱՄՆ հայ համայնքն այլեւս չի խաբուի նախագահի թեկնածուի կեղծ խոստումներին

2011-04-12

Այդ մասին գրում է The California Courier-ի խմբագիր հարութ Սասունեանը: Նա յիշեցնում է, որ անցեալ տարի, երբ Օբաման այցելել է Լոս Անջելես եւ Գլենդէլ, հայերից ոչ մէկը նրա դէմ հանդէս չի եկել:



Բարաք Օբաման Սան Ֆրանցիսկոյում լինելու է ապրիլի 20-ին, Լոս Անջելեսում՝ ապրիլի 21-ին: Կալիֆորնիայում նա մասնակցելու է «Օբամայի յաղթանակը 2012-ին է կալիֆորնիայի հայերը փայլուն հնարաւորութիւն ունեն հիմնադրամի ստեղծմանը: ցոյց տալու, որ նրանք դժգոհ են վարչակազմից Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցում:

Առաջիկայ 18 ամիսների ընթացքում ԱՄՆ հայերն անցկացնելու են ցոյցեր նախագահական քարոզարշաւների ժամանակ մինչեւ 2012-ի նոյեմբերի նախագահական ընտրութիւնները: Դա հիմնալի պահ է նախագահի հանդէպ վստահութեան կորուստն ընդգծելու համար, առաւել եւս, որ Օբամայի վարկանիշը հիմա ցածր է:

«հայերը նախագահի ներողութեան կարիքը չունեն նրա համար, որ նա չի արտասանել «ցեղասպանութիւն է բառը: Նախագահ Ռոնալդ Ռեյգանն օգտագործել է այդ բառը 1981-ի ապրիլի 22-ին: Հայերի բողոքի միակ պատճառն է՝ հասկացնել տալ ԱՄՆ նախագահին, որ հայ համայնքն այլեւս չի խաբուի, երբ քաղաքական գործիչները կեղծ խոստումներ են տալիս՝ ընտրողների ձայները ստանալու համար եւ ընտրուելուց յետոյ անտեսում են այդ խոստումները: 2012-ի նախագահական ընտրութիւններում հայերի կարգախօսը պէտք է լինի «ոչ մի ձայն եւ ոչ մի պեննի Օբամայի համարէ,- ընդգծել է Սասունեանը:

Ալթին Նովգորդիի հայ համայնքի ջանքերով քաղաքում հայկական եկեղեցի է կառուցում

2011-04-12

Ներկայացնելով մայրաքաղաքի արդիւնաւետ կառավարման առաջնահերթութիւնները՝ քաղաքապետն ընդգծել է, որ քաղաքապետարանը նպատակ ունի փոխաշահուել համագործակցութիւն ծաւալել գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ: «Բիզնես տրամաբանութիւն ունեցող ոլորտների մասնաւոր կառավարման արդիւնքում ոչ միայն կշահեն կոնկրետ ուղղութիւնները, այլ նաեւ բիզնէից խնայուած զգալի միջոցները կ'ուղղուեն սոցիալական, բնապահպանական, կրթական եւ այլ ոլորտներէ,- նշել է Կարեն Կարապետեանը եւ յաւելել, որ քաղաքապետարանը բաց է ցանկացած համագործակցութեան,



որն ուղղուած է մայրաքաղաքի զարգացմանը:

Շնորհակալութիւն յայտնելով ջերմ ընդունելութեան համար՝ Օլէգ Սորոկինը Կարէն Կարապետեանին է ներկայացրել քաղաքային տնտեսութեան կառավարման ոլորտում վերջին տարիների իրենց փորձը: Խօսելով շուրջ 35000-անոց հայկական համայնքի մասին՝ Օլէգ Սորոկինը նշել է, որ այն ակտիւ ներգրաւուած է քաղաքի տնտեսական եւ մշակութային կեանքում: Ներկայում համայնքի հնարարութիւններով հայկական եկեղեցի է կառուցում:

Կողմերը մտքեր են փոխանակել կոմունալ տնտեսութեան, առողջապահութեան, տրանսպորտի եւ կրթութեան ոլորտներում իրականացուող ծրագրերի վերաբերեալ: Երեւանի եւ Նիժնի Նովոքորոժի քաղաքապետերը քննարկել են նաեւ հնարաւոր համագործակցութեան հեռանկարները, հաղորդում է Քաղաքապետարանի հասարակայնութեան հետ կապերի վարչութիւնը:



Իսպանիայի Հայ Դատի յանձնախումբը ողջունում է Արգենտինայի դատարանի որոշումը Հայոց ցեղասպանութեան մասին

2011-04-12

Գրեգորիոյ Հայրապետեանը դեռեւս 2000 թուականին հայց էր ներկայացրել Արգենտինայի դատարան՝ պահանջելով իրեն տեղեկութիւններ հաղորդել Յեղասպանութեանը զոհ դարձած իր հարազատների մասին:

Հետաքննութեան ընթացքում դատարանը փաստաթղթեր էր հաւաքել Մեծ Բրիտանիայի, Ամնի, Գերմանիայի, Վատիկանի, Ֆրանսիայի եւ այլ երկրների արխիւներից՝ Օսմանեան կայսրութիւնում հաւատարմագրուած դեսպանների գեկուցագրեր, գաղտնի հաղորդագրութիւններ, դիւանագիտական նամակագրութիւններ եւ այլն, որոնք ապացուցում են, որ Օսմանեան Թուրքիան իրականացրել է հայերի կանխամտածուած ցեղասպանութիւն, որին զոհ է գնացել 1.5 միլիոն մարդ, իսկ փրկուածները ստիպուած են եղել լքել իրենց հայրենիքը եւ բնակութիւն հաստատել այլ երկրներում:

Պաշտօնական Անկարան, հաւատարիմ իր ժխտողական քաղաքականութեանը, դատապարտել է Արգենտինայի դատարանի որոշումը:



Հայ համայնքի ձայնը 70-միլիոնանոց Թուրքիայում հազիւ թէ կարողանայ ազդել ընտրութիւնների արդիւնքների վրայ

2011-04-12

Այդ մասին PanARMENIAN.Net ի թղթակցի հետ գրոյցում յայտարարել է Կովկասի ինստիտուտի տնօրէն, քաղաքագետ Կարէն Կարապետեանը: Ըստ նրա, եթէ նրանք ընտրուէին, կը միանային որեւէ կուսակցութեան: «հարկ է նշել, որ 60-70 հազար կազմող հայ համայնքի ձայնը 70-միլիոնանոց Թուրքիայում հազիւ թէ կարող է ազդել ընտրութիւնների արդիւնքների վրայ: Ուստի, հայազգի պատգամաւորներն այնքան էլ պէտք չենէ, -ասել է Իսկանդարեանը:

Ապրիլի 11-ին Թուրքիայի խորհրդարանական ընտրութիւններին մասնակցող կուսակցութիւնները պէտք է ներկայացնէին թեկնածուների ցուցակները: Ինչպէս հաղորդում են թուրքական ՉՄ-ները, ոչ մի ցուցակում հայազգի թեկնածու չկայ: Հայազգի թեկնածուների առաջադրելու մտադրութեան մասին ասում էին իշխող ԱԶԿ եւ գլխաւոր ընդդիմադիր Ժողովրդահանրապետական կուսակցութեան ներկայացուցիչները:

Ապրիլի 19-ին Հասապատում տեղի կ'ունենայ ոգեկոչման համերգ՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

2011-04-11

Համերգի ծրագրում հնչելու են Կոմիտասի, Բարաջանեանի, Եօհան Սեբաստիան Բախի ստեղծագործութիւնները:

Ամն-ում կը կայանայ պրոֆէտոր Շեմասեանի «հայ փախստականները Պորտ Սաիդում, Եգիպտոս 1915թ.է դասախօսութիւնը

2011-04-11

Դասախօսութեան ընթացքում կը քննարկուի բռնագաղթի ու ոչնչացման վերջին փուլը, երբ հայերը հասան Սիրիա: «վրանային աւանդէ Պորտ Սաիդում փրկութեան միակ վայրն էր Սերձաւոր Արեւելքում 1915թ. վերապրածների համար: Ճամբարը ստեղծուել էր 1915թ. սեպտեմբերի կէսին, երբ այնտեղ տեղափոխուեցին Մուսայ լեռան պաշտպանները: Փախստականները մնացին Պորտ Սաիդում մինչեւ 1919թ.:

Դասախօսութեան մէջ ասում է այն մասին, թէ ինչպէս էր կառավարում ճամբարը, ինչպիսին էր Եգիպտոսի հայերի արձագանքը, ինչ միջոցներ ձեռնարկուեցին փախստականների վիճակի բարելաման համար: Պրոֆէտոր Շեմասեանը կը պատմի նաեւ այն մասին, թէ ինչպէս էին փախստականները ապահովուում սնունդով, աշխատանքով, կրթութեամբ:

Պատմութեան պրոֆէտոր Վահրամ Շեմասեանը Կալիֆորնիայի համալսարանի հայագիտութեան ծրագրերի ղեկավարն է: Նա զբաղւում է Մուսայ լեռան եւ Հայոց ցեղասպանութեան պատմութեամբ եւ առաջատար մասնագետ է Մուսայ լեռան պաշտպանութեան հարցում: 2010թ. ամռանը նա պարգեւատրուել է «վիլեան Սարոյանէ մեդալով:



Երուսաղէմում տեղի կ'ունենայ սիմպոզիում Հայոց ցեղասպանութեան թեմայով

2011-04-11

Սիմպոզիումը կազմակերպուել է պրոֆէտոր Մայրլ Սթոունի նախաձեռնութեամբ: Սիմպոզիումին ներկայ կը գնտուեն Երուսաղէմի հայոց պատրիարք Թորգոմ Երկրորդը, Երուսաղէմում ՀՀ հիւպատոս Յովակ Մոմջեանը, «քաղիմաէ իշխող խորհրդարանական կուսակցութեան ղեկավար Ջէն Էլլիինը, ֆակուլտետի ղեկան Ռեուեն Ամիթայը:

«ցեղասպանութեան զոհերի յիշատակի նշանակութունը ողջ մարդկութեան համար է իմնական գեկոյցով հանդէս կը գայ պրոֆէտոր Բարայէ Զարնին: Պրոֆէտոր Էլլիանու Ռիխտերը հանդէս կը գայ «իշողութիւնից մինչեւ կ'անխարգելումէ, իսկ Եօսայ Բիւինը՝

«ցեղասպանութեան նշանակութիւնն իմ ընտանիքումէ գեկոյցներով:

Հասարակութիւն



Մասաչուսեթսի նահանգապետ Դեալ Պատրիկը յայտարարուել է 2011 թ. «հայերի բարեկամ»

2011-04-15

Մենք չենք մոռանում անցելը եւ հենց այդ պատճառով աւելի լաւ ենք դարձել:

Պատրիկի թեկնածութիւնն առաջադրուել է նահանգի հայ համայնքի կողմից եւ Հայ առաքելական եկեղեցու Արեւելեան թեմը հաստատել է առաջադրումը:

Դեալ Պատրիկը Հայոց ցեղասպանութեան ճանաչման ջատագով է: 2010-ի նոյեմբերին նա վերընտրուել է Մասաչուսեթսի նահանգապետի պաշտօնում, գրում է The Armenian Mirror-Spectator-ը:

Մշակոյթ



2011-ի ընթացքում Յունաստանում տեղի կ'ունենան միջոցառումներ՝ նուիրուած Վիլեամ Սարոյեանին

2011-04-15

Առաջին միջոցառումը կայացել է ապրիլի 13-ի երեկոյեան Յոյն-ամերիկեան միութեան լեզվեցուն թատերասրահում:

Յունահայ արուեստի գործիչներ՝ Նազիկ Այտինեանը, Հայկ Գասարճեանը, Էլենի Քասսետեանը եւ Լորանա Մենենտեանը ընթերցեցին եւ արտասանեցին Սարոյեանի աշխատութիւններից հայկական հեքիաթները՝ յոյն հասարակութեանը ներկայացնելով միջազգային ճանաչում ունեցող գրողին երաժիշտներ Սկրտիչ Պօղոսեանի (ուր) եւ Լեֆտերիս Հաւուցասի (կիթառ) ընկերակցութեամբ:

Վիլեամ Արմենակի Սարոյեանը (անգլերէն՝ William Saroyan, Օգոստոսի 31 1908 - Մայիսի 18 1981)՝ ամերիկահայ գրող է: Ծնուել է Ֆրեզնոյում (ԱՄՆ, Կալիֆորնիա), Բիթլիսից գաղթած հայ ընտանիքում: Սարոյեան գրողի ձեւաւորման մեջ մեծ դեր է խաղացել ինքնակրթութիւնը, ամերիկեան ու համաշխարհային գրականութեան ընթերցումը, հարազատ ժողովրդի հոգեւոր մշակոյթի, ասանդոյթների, պատմութեան տարրերի ծառանգումը, հայկական շրջապատի ազգային ինքնատիպութիւնը:

Առաջին անգամ տպագրուել է 1933-ին, Բոստօնի «հայրենիքը շաբաթաթերթում»՝ Միքակ Գորեան ստորագրութեամբ: Լայն ճանաչում է ձեռք բերել «Խիզախ պատանին թռչող ձօճաձողի վրայ եւ այլ պատմածքները (1934) առաջին գրքով: Իրականութեան եւ երազանքի հակադրութեան, անհատի ներքին ազատութեան եւ հոգեւոր գեղեցկութեան, սիրոյ եւ բարու հաստատման մոտիվներն են մարմնաւորուած Սարոյեանի արձակուրդ, որոնք հետաքրքրական լուծում են ստացել նաեւ նրա դրամաներում («Իմ սիրտը լեռներում է»), «Կեանքիդ ժամանակը», «Քարանձախ մարդիկ», «հէ՛յ, յ՛վ կայ այդտեղ», «Կոտորածն մանկանց», «Խաղողի այգին է պիեսները»:

1942-ին Սարոյեանը զօրակոչուել է բանակ, աշխատել զինուորական սցենարների ստեղծման վրայ: Նա պատերազմն ընկալել է որպէս աղէտ, այդ թեման արտացոլել «մարդկային կ'ատակերգութիւն է վիպակում եւ «վեալի Ջեքսոնի արկածները վէպում: 1950-1960-ական թթ. Սարոյեանը ապրել է Եւրոպայում, ապա նորից հաստատուել Ամն-ում: Այդ տարիներին ինքնակենսագրական նիւթի օգտագործումով ստեղծել է հոգեբանական վիպակների շարք:

1960-ական թթ. սկսած՝ գրել է յուշագրական ժանրի գործեր: Յատկապէս ուշագրաւ են Բեռնարդ Շուրին, Չարլի Չապլինին, Թ. Էլիոտին, Եղիշէ Չարենցին նուիրուած էջերը, հեղինակի մտորումները գրականութեան կոչման վերաբերեալ:

Վիլեամ Սարոյեանը մահացել է մայիսի 16 1981 թուին, Ֆրեզնոյում, աճիւնի մի մասը թաղուած է Երեւանի Կոմիտասի անուան զբոսայգու պանթեոնում:



Ապրիլի 13-ին Հռոմում տեղի կ'ունենայ Շառլ Ազնաւուրի համերգը

2011-04-12

Ինչպէս յայտնում է Musical news-ը, աշխարհահռչակ շանսոնյէի համերգը կայանալու է Parco della Musica համերգասրահում: Համերգը կայանալու է Սանտա Չեչիլիայ Ազգային ակադեմիայում «սանտայ Չեչիլիայ՝ դա հիանալի էէ շարքի շրջանակներում:

Վերջին անգամ Ազնաւուրը հանդէս է եկել Իտալիայում 1983-ին: Ինչպէս գրում է գործակալութիւնը, իտալական հասարակութիւնն անհամբերութեամբ է սպասում անուանի շանսոնյէի համերգին:

Շառլ Ազնաւուրը ֆրանսահայ շանսոնյէ է եւ դերասան: Իսկական անունը՝ Շահնուր Վաղինակ Ազնաւուրեան: 2009-ի մայիսի 5-ից Շուեյցարիայում Հայաստանի դեսպան է եւ ՄԱԿ կենտրոնակայանում երկրի մշտական ներկայացուցիչ:

Ազնաւուրը ստեղծել է շուրջ 1000 երգ, խաղացել է 60 ֆիլմերում եւ վաճառել աւելի քան 100 մլն ձայնասկաւառակ: «TIME» ամսագրի եւ CNN-ի անցկացրած հարցման համաձայն (1998) Ազնաւուրը ճանաչուել է 20-րդ դարի լաւագոյն էստրադային կատարող:

Մշտապէս բնակւում է Շուեյցարիայում, բայց նախկինի նման շարունակւում է իրեն համարել հայ եւ ֆրանսիացի:

Կալիֆորնիայի հայ գրողները կը յարգեն Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը

2011-04-11

Արարողութեան ընթացքում կ'ընթերցուն երիտօրրերի կողմից ոչնչացուած հայ գրողների ստեղծագործութիւնները, յայտնում է AWAOC-ի մամլոյ ծառայութիւնը:



Ապրիլի 16-ին Կրեմլի պալատում կ'անցնի Armenia Music Awards 2011 մրցանակաբաշխութիւնը

2011-04-11

Մրցանակաբաշխութեան հանդիսատք արարողութիւնը Հայաստանի եւ սփիւռքի երաժշտական կեանքի ամենավառ իրադարձութիւնն է: Այս տարի, ինչպէս նախորդ տարիներին, 6-րդ ազգային մրցանակաբաշխութեան հիւրերը կը լինեն հայկական, ռուսական եւ արտասահմանեան էստրադայի աստղերը: Պարգեւատրման արարողութիւնը կը

հետարձակուի ՀՀ ուղիղ եթերում աշխարհի 137 երկրներում՝ Ամերիկա, Եւրոպա, ԱՊՀ:

5 տարուայ ընթացքում մրցանակաբաշխութեան հիւրերն ու նոմինանտներն են եղել Հայաստանի, Ռուսաստանի, աշխարհի այլ երկրների մշակոյթի, արուեստի ու շոու-փիզնեսի յայտնի գործիչները, այդ թում Ծերը, Ջիւան Գասպարեանը, Թաթայ Սիմոնեանը, Բոսիֆ Կորգոնը, Իզոբ Կրուտոյը, Իրինա Ալեգրովան, Լիզ Միտչելը, Դեմիա Ռուսսը եւ այլք:

Սպորտ



Ապրիլի 24-ին Ստամբուլում հայ ձիւղոխստները կը պաշտպանեն իրենց երկրի պատիւը

2011-04-14

Այս հաւաքը վերջին էր ապրիլի 20-24-ը Թուրքիայի Ստամբուլ քաղաքում կայանալիք Եւրոպայի մեծահասակների առաջնութեան նախապատրաստման համար:

Հաւաքականի գլխաւոր մարզիչ Ադրիան Կրոյտորուն հրապարակեց մասնակիցների անունները՝ Յովհաննէս Դաւթեան (60կգ, Գիւմրի), Արմէն Նազարեան (66կգ, Հրազդան), Համբարձում Տօնյեան (66կգ, Գիւմրի), Արտեմ Բաղդասարեան (73կգ, Գիւմրի), Յակոբ Առաքէլեան (100կգ, Երեւան), աղջիկներից՝ Գայիանէ Յարութիւնեան (48կգ, Երեւան), հաղորդում է Հայաստանի Չիլդրի ֆեդերացիան:



Վիկ Դարչինեան. Ապրիլի 24-ին ողջ իմ թիւնը յարգելու է Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը

2011-04-14

Հայ բոնցքամարտիկն ասել է, որ այդ մենամարտում նա ցուցադրելու է պայքարի նոր ոճ եւ նոկատի է ենթարկելու Եօննի Պերեսին: «Նամ կարող ասել, թէ որ ռաունդում Պերեսը կը հեռանայ: Միայն գիտեմ, որ վաղ թէ ուշ եւ կ'ոչնչացնեմ նրան: Կարծես թէ նա իր կարիերայի ընթացքում ոչ մի անգամ չի յայտնուել ռինգի յատակին, բայց ես իմ շատ մրցակիցներին խորը նոկատի եմ ենթարկել: Եւ ես դա նորից կ'անեմ,- Դարչինեանի խօսքերը հաղորդում է fightnews.com-ը:

որ կոլումբիացին լաւ բոնցքամարտիկ է:

Դարչինեանը նշել է, որ յարգում է իր մրցակցին եւ անձնական ոչ մի բան չունի նրա դէմ, քանի

«ապրիլի 24-ը կարեւոր տեղ ունի իմ բոլոր հայրենակիցների կեանքում, դա Հայոց ցեղասպանութեան օրն է: Ես ուզում եմ, որպէսզի բոլորը դիտեն այդ մարտը եւ զգան, թէ որքան հիմնաւորուած եմ եւ գործելու: Իմ ողջ թիւնը այդ օրը յարգելու է 1915-ի Հայոց ցեղասպանութեան անմեղ զոհերի յիշատակը,- ասել է Դարչինեանը:



ATP ապրիլեան վարկանիշում Դաւիթ Նալբանդեանը շարունակում է 1585 միաւորով զբաղեցնել 19-րդ տեղը

2011-04-11

Արգենտինահայ թենիսիստ դաւիթ Նալբանդեանը նախկինի նման 1585 միաւորով շարունակում է զբաղեցնել 19-րդ տեղը:

Առաջատարների ետեակը չի փոխուել: առաջին տեղում Ռաֆայէլ Նադալն է (Բուսանիայ), երկրորդ տեղում՝ Նովակ Ջոկովիչը (Սերբիայ), 3-րդ տեղում՝ Ռոժէ Ֆեդերերը (Շուեյցարիայ):

Դաւիթ Նալբանդեանը մարտի 11-ին տարել է աճուկային ճողուածքի վիրահատութիւն եւ այդ պատճառով բաց թողել մի քանի մրցաշար: Թենիսիստի բժշկի խօսքերով, եթէ նա հասցնի ժամանակին առողջանալ, ապա կորտ կը վերադառնայ մայիսի 1-ին եւ հանդէս կը գայ

Մադրիդի, այնուհետեւ Հռոմի մաստերսներում:

Յայտարարութիւններ



«Հայապահպանութեան գործում ունեցած նշանակալի աւանդի համար է համահայկական ամենամեայ մրցանակաբաշխութիւնը

2011-04-14

«Մայրենիի լաւագոյն ուսուցիչէ մրցոյթը կ'ազմակերպուի է՝ նկատի ունենալով Սփիւրքում հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան, ուժացման դէմ պայքարում ինքնութեանն ու հայ ժողուն հաւատարմիւ հայ սերունդներ դաստիարակելու, 21-րդ դարի մարտահրաւերների պայմաններում հայ երէկային հայ պահելու նուիրական գործում մայրենի լեզուի ուսուցչի առաքելութիւնը: Այն նպատակ ունի խրախուսել Սփիւրքում հայ ազգային ինքնութեան, մայրենի լեզուի պահպանման, զարգացման եւ տարածման, հայ սերնդի հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան գործում նշանակալի աւանդ ունեցող ուսուցիչներին, ներկայացնել եւ տարածել նրանց մանկավարժական եւ մասնագիտական առաջաւոր փորձը Սփիւրքում, նպաստել սփիւրքահայութեան մէջ հայերէնի ուսուցիչ-մանկավարժի հեղինակութեան

բարձրացմանը:

«Մայրենիի լաւագոյն ուսուցիչէ մրցոյթին կարող են մասնակցել Սփիւրքում գործող հայկական ամենօրեայ եւ մէկօրեայ կրթօջախների մայրենի լեզուի այն ուսուցիչները, որոնք

-աշխատում են տունէլ երկրի օրէնսդրութեանը համապատասխան գործող դպրոցում, (ամենօրեայ, մէկօրեայ) կամ տեղի հայկական կազմակերպութեանը, եկեղեցական կառոյցին կից մասնագիտացուած կրթական հաստատութիւնում,

- ունեն առնուազն 3 տարուայ աշխատանքային փորձ՝ որպէս հայոց լեզուի ուսուցիչ:

Մրցոյթին մասնակցել ցանկացող ուսուցիչները լրացուած յայտադիմումները պէտք է ներկայացնեն ՀՀ սփիւրքի նախարարութիւն մինչեւ ս. թ. յուլիսի 15-ը:

Յայտադիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել նաեւ

- լուսանկար,

- կրթության մասին փաստաթուղթ (պատճեն),
 - բնութագիր-երաշխատագիր տուեալ դպրոցի, կառույցի կամ համայնքի կողմից:
- Մրցույթի արդյունքները կ'ամփոփուեն 2011թ. սեպտեմբեր ամսին:

«Լաւագոյն երիտասարդական կ'ազմակերպութիւնները մրցույթը կ'անցկացուի սփիւռքեան երիտասարդական կազմակերպութիւններին միջև:

Հասարակութեան շարժիչ ուժը երիտասարդներն են: Սփիւռքում գործող երիտասարդական կազմակերպութիւններն իրենց մասնակցութիւնն են ունենում երիտասարդութեան առնչուող կրթական, գիտական, մշակութային, տնտեսական, մարզական, քաղաքական հարցերին, կազմակերպում են քննարկումներ, համագային նշանակութեան խնդիրներին նկատմամբ միասնականութիւն են դրսևորում եւ փորձում են իրենց ներդրումն ունենալ տարբեր համահայկական ծրագրերի եւ միջոցառումների իրականացման գործում: Բարաքանչիւր երիտասարդական կազմակերպութիւն ունի իր գործելակերպն ու սկզբունքները, առաքելութիւնն ու պատասխանատուութիւնը: Մրցույթը նպատակ ունի ոգևորել եւ խրախուսել սփիւռքեան եւ համահայկական երիտասարդական կազմակերպութիւններին՝ կարեւորելով նրանց դերակատարութիւնը համահայկական եւ միջազգային խնդիրների լուծման գործում:

«Լաւագոյն երիտասարդական կ'ազմակերպութիւնները մրցութիւն կարող են մասնակցել Սփիւռքում գործող երիտասարդական կառույցները, որոնք

-գրանցուած են տուեալ երկրի օրէնսդրութեանը համապատասխան կամ գործում են տեղի հայկական համայնքին, մշակութային, եկեղեցական կամ այլ հայկական կառույցին կից,

- ունեն առնուազն 3 տարուայ գործունէութեան փորձ:

Լրացուած յայտադիմումների՝ ՀՀ սփիւռքի նախարարութիւն ներկայացման վերջնաժամկէտը յուլիսի 20-ն է:

Մրցույթի արդյունքները կ'ամփոփուեն 2011թ. սեպտեմբեր ամսին:

«Կտոր մը Հայրենիքէ երիտասարդական հայագիտական հետազոտութիւններին մրցանակաբաշխութիւնը նուիրուած է Հայաստանի անկախութեան 20-ամեակին:

Բոլոր ժամանակներում հայ ստեղծագործ ու ճկուն մտքի շնորհիւ է հնարաւոր եղել հայ ժողովրդի դիմակայումը ճակատագրի փորձութիւններին: Երիտասարդութիւնը, կայանալով այդ փորձութիւնների մասին գիտելիքներ ստանալով եւ նոր ժամանակներում նոյն այդ փորձութիւնների ակնաստեղծ լինելով, ձեւաւորում է իր աշխարհատեսութիւնն ու արժէքային համակարգը: Բարաքանչիւրն ունի Հայրենիքի իր ընկալումը, եւ այս հետազոտութիւնները հրաշալի հնարաւորութիւն են ընձեռում ճանաչելու այն՝ երիտասարդութեան աչքերով:

Մրցանակաբաշխութեան նպատակն է վերհանել հայ երիտասարդի մտահոգութիւնները, Հայրենիքի ամրապնդմանն ու հզօրացմանն ուղղուած քայլերի կանխատեսումը, եւս մէկ անգամ հաստատել նրանց կարեւորագոյն դերակատարութիւնը հայոց պետականութեան զարգացման գործում:

«Կտոր մը Հայրենիքէ երիտասարդական հայագիտական հետազոտութիւնների մրցութիւն կարող են մասնակցել ուսանողներ, ասպիրանտներ եւ մինչեւ 35 տարեկան երիտասարդ գիտնականներ Հայաստանից եւ Սփիւռքից:

Մասնակցութեան համար լրացուած յայտադիմումը եւ գիտական հետազոտութիւնը/աշխատանքը (հայերէն, մինչեւ 10 էջ ծաւալով) պէտք է ներկայացնել ՀՀ սփիւռքի նախարարութիւն մինչեւ ս. թ. սեպտեմբերի 5-ը:

Հայագիտական հետազոտութեան հետ անհրաժեշտ է ներկայացնել նաեւ ուսումնական հաստատութեան կամ գիտական կազմակերպութեան գրաւոր կարծիքը յայտատուի գիտական աշխատանքի վերաբերեալ:

Բարաքանչիւր անուանակարգի համար ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ Համաշխարհային հայկական կոնգրէսի կողմից ձեւաւորում են մասնագիտական մրցութային յանձնաժողովներ, որոնք մշակում են յայտադիմումները, գնահատման չափանիշները, ինչպէս նաեւ որոշում են մրցանակակիրներին: Բոլոր անուանակարգերում մրցանակակիրներից կը պահանջուեն նաեւ բանկի տուեալներ (անուանում, հասցէ, SWIFT, հաշուեհամար), ինչպէս նաեւ անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատուութիւն:

«Հայապահպանութեան գործում ունեցած նշանակալի ասանդի համարեւ համահայկական ամենամեայ մրցանակաբաշխութեան 2011թ. յայտարարութիւնը, յայտադիմումները, յետագայում՝ մրցութային յանձնաժողովների աշխատանքների, մրցութների արդիւնքների մասին տեղեկատուութիւնը ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ Համաշխարհային հայկական կոնգրէսի կայքէջերում՝ www.mindiaspora.am, www.armcongress.am, նախարարութեան «հայերն այսօր» էլեկտրոնային թերթում:

Համահայկական ծրագրերի վարչութիւն
+374-10-585601(03)-117,
allarmenian@mindiaspora.am



ՍՓՅՈՒՌԱՅԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ

2011-04-14